«Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ
ք.Երևան, Արշակունյաց 44

02 մարտի 2020 թ.
ժամը 12:00

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

**ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի**

**գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

**Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Գրիգորյան**
**անդամներ՝ Դ.Սարդարյան**
**Գ. Հեղինյան**
**Հանձնաժողովի քարտուղար՝Ս. Ավագյան**

**ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված**

---

## 1. <u>Հանձնաժողովի նիստի օրակարգը</u>

**Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գրիգորյան**

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2.Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտերի ներկայացման և բացման մասին,
4.Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների գնահատման մասին,
5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ,
6. Հանձնաժողովի նիստի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին,
7. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

## 2. <u>ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորման մասին</u>

**<u>Ընդունել ի գիտություն որ՝</u>**

**2.1 ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով հայտարարված հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:**

## 3. <u>ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով մրցույթի հայտերի ներկայացման և բացման մասին</u>

**3.1Հայտերը թղթային եղանակով բացվել են 2020 թվականի մարտի 02-ին ժամը $12^{00}$-ին ք.Երևան, Արշակունյաց 44 հասցեում:**

**3.2 Սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.**

| N | Մասնակիցների անվանումները | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|
| 1. | «ՖԼԵՇ» ՍՊԸ | flashltdtender@gmail.com |
| 2. | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ | tendercps@gmail.com |
| 3. | «Մաքս օիլ» ՍՊԸ | maxoil.llc@mail.ru |

**Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:**

## 4. <u>Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների կազմման և բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության մասին.</u>

**4.1Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:**

4.2Մասնակիցների կողմից ներկայացված՝ բացված ծրարում առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը:

4.3Մասնակիցների հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ «Մաքս օիլ» ՍՊԸ-ի, որի հայտով ներկայացրած գնային առաջարկը (Հավելված 2) չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես գնային առաջարկում (հավելված 2) «Մաքս օիլ» ՍՊԸ -ի կողմից նշվել է բաց մրցույթի հրավեր՝ գնանշման հարցման հրավերի փոխարեն:

4.4 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Մաքս օիլ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

5.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են. (ՀՀ դրամ)

| Ապրանքի անվանումը | | | | Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների / Առանց ԱԱՀ / | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Չ/Հ | Անվանումը | Չափման միավորը | Ընդհանուր քանակը | «ՖԼԵՇ» ՍՊԸ | | | «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ | | | Նախահաշվային գինը (ՀՀ դրամ) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | | 6 | | | 7 |
| | Անվանումը | | | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | Շահույթ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ | Ինքնարժեք /տառերով և թվերով/ | Շահույթ /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
| 1 | Բենզին, ռեգուլյար | լիտր | 10500 | 2 926 945 /երկու միլիոն ինը հարյուր քսանվեց հազար ինը հարյուր քառասունհինգ/ | 109 305 /մեկ հարյուր ինը հազար երեք հարյուր հինգ / | 3 643 500 /երեք միլիոն վեց հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր/ | 2 987 600 /Երկու միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր / | 92 400 /իննսուներկու հազար չորս հարյուր/ | 3 696 000 /երեք միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար/ | 4 305 000 /չորս միլիոն երեք հարյուր հինգ հազար/ |

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3(երեք), դեմ – 0:

## 6. ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով մրցույթի նիստի հայտերի գնահատման և արդյունքների ամփոփման մասին

6.1Հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը որոշեց 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

ա/ 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին:

բ/ 1-ին չափաբաժնի համար 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ» ՍՊԸ -ին:

6.2 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասով, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ապրանքի ամբողջական նկարագրերի հրավերի պահանջներին համապատասխանության և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.

ա/ 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՖԼԵՇ» ՍՊԸ –ին ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում ՝ կողմ 3(երեք), դեմ 0 (զրո)

## 7. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին

Հանձնաժողովը որոշեց.

7.1 Ծանուցել ընտրված մասնակցին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով ներկայացնելու որակավորման ապահովում՝ իր ներկայացրած գնային առաջարկի չափով և պայմանագրի ապահովում՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով :

7.2 ՀԿՏԿ-ԳՀԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 1-ին մասի 8.22 կետով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել և նրա հետ կնքել պայմանագիր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված կարգով :

7.3 Հաստատել գնանշման հարցման ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության մասին տեքստը:

7.4«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը :

Ընդունվել է որոշում ՝ կողմ 3(երեք), դեմ 0 (զրո)

Հանձնաժողովի՝

նախագահ՝ ________________ Ա. Գրիգորյան

անդամներ՝ ________________ Դ. Սարդարյան

________________ Գ. Հեղինյան

քարտուղար՝ ________________ Ս. Ավագյան